

ձանագրութիւնը. Այս յիշատակարանն Տն. Յակոբայ որ եղև ի ձեռն խնդրելոյ: Այս տեղը այժմ կը վերաբերի Ռուսաց՝ որ 1892ին գտան նոյն տապանագիրը նոր եկեղեցիի մը հիմնարկէքը կատարելու ժամանակ: Նոյն տեղերուն մօտ Ռուսերը 1871ին գլտած են նաև ուրիշ հայկական տապանագիրները Ջօրիկի, Շուշանի և Մարիկի: Բաց աստի, 1883ի ատեն Ռուսաց նոյն կալուածին մէջ շատ աւելի գեղակերտ մողայիքներով զարգարուած ուրիշ հայկական յիշատակարաններ գտնուած են. որոնց արձանագրութիւնները կը գնենք հոս.

Բարեխօս ուներով առ Ասուած գտուրք Եսայի եւ գերանէղին հարս եւ Վաղան արարի յիսն քողորքեան մեղաց գՅիշատակարանս գայս:

Այս է յիւր երանելոյն Շուշանկայ մարն Արսաւանայ, Հոռի ԺԸ: Վասն քողորքեան մեղաց Թեւայ, Աքսառ եւ Մարիկն:

Ձիթենեաց լերան վրայ գտնուած այս հայկական դամբարանները շատ իրարու մօտ են և կը գտնուին Ռուսաց կալուածին մէջ, ուր այժմ կը պահուին շատ խնամով:

ՅԱԿՈՒԲ ԵՊՍ. ՏՐԱՊԵՉՈՆՅԻ. — 1611ին գաւառացի բազմաթիւ ուխտաւորներով կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. Գրիգոր վրդ. Դարանաղցի Ակնոյ մէջ կը հանդիպի այս ուխտաւորներուն որ յիսուն օր ձիւնարգել կ'ըլլան նոյն տեղը և յետոյ կը մեկնին (Դարանաղցի. էջ 165):

ՅԱԿՈՒԲ ԵՊՍ. ՔԷՕԹԱՀԻԱՅԻ. — Հայրը Պեհրուս քն. մայրը Մարթա. 1618 թուին Քէօթահիայի Ս. Սարգիս եկեղեցիին մէջ գրուած Սաղնու-Ժամագրիի մը յիշատակարանին համաձայն: Ան եպս. ձեռնադրուած է 1604ին Նախիջևանի մէջ Մեղքիսեղեկ կիթղէն: Յակոբ եպս. ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը Գրիգոր Պարոնտէր պտրք.ի ժամանակ, առաւել տեղեկութեան համար տեսնել նաև (Բիւրակն, 1900, էջ 371-372. Դարանաղցի, էջ 132):

ՅԱԿՈՒԲ ԵՐԷՅ ԿԵՍՍԸՍԻ. — Եղբօրորդի և աշկ. Կեսարացի Գրիգոր պտրք.ի. հայրը Պաղտատար, մայրը Միքիսայ. կ'ամուսնանայ և երէց կը ձեռնադրուի նպաստաւորութեամբ Ղայսաբ Զէլէպիի: 1654ին իր գիրքերը կը նուիրէ «ի դուռն Ս. Սարգիս գօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին ի Կեսարիա քաղա-